4. ՌԱՀԻԲ ԸՆ ԹԵՋԻՐ

Կէղի, չէղի մե թագավորմ կէղի։ Թագավորին իրեք հատ տղա կէղի։

Տղեքներ օր կմեծնան, կէրթան սարեր ղվռնելու։ Թագավոր կըսա ուր աղեքներուն.

— Քաղքի աջ կողմ մե քարմ կա, էն քարի վրեն ձեր ուժ չփորձեք։

Մեծ տղեն ման գալուց օր կուգա, խոր խոսքին անկաջ չընելով թուր կքաշա, քարին կզարկա, քար էրկու կտոր կէղի, մե ախչկա պատկերք քարի միջից դուրս կուգա։

Տղեն պատկերք օր ձեռք կառի, կսիրահարվի, էնպես քիթ ու բերնի վրա կընկի։ Տղի ախպրտիք կուգան կհասին, ախպեր ընկուկ դեից կշիտկի։

— Ախպե՜ր, էդ ի՞նչ էր քզի ձեռք տվեց,— խարցուցին։

Ախպեր կխանա պատկերք, ախպրտոց նշանց կիտա, կըսա.

— Իմն օր կա, էս պատկերքի տերն ա։

Պզտիկ ախպեր Ռահիբ ըն Թեջիր անվոր, կըսա.

— Ես պիտի գնամ պատկերի տեր քզի բերիմ։

Էդ խոսք ըսելով, խըտ իրար տուն կուգան։ Պզտիկ տղեն կէրթա, իր խոր կըսա.

— Իմ մեծ ախպեր էս բան էնեց, խոսքը չլսեց, ուր թուր քարին զարկեց։ Էս պատկերք քարի միջից էլավ, կըսա. «Իմն օր կա, էս պատկերքի տերն ա»։

Թագավոր ըսեց.— Ա՛յ աղա, էդ պատկերքի տեր տըժար ծեռը ելուգա։

— Տըժար իգա, չիգա, ես կէրթամ, կբերեմ։

— Դու՛ դինաս։

Ռահիբ ըն Թեջիր էդ խոսք լսելուց, խորից դաստուր առավ, ճամփա ընգավ։ Շատ ու քիչ աստված գինա ինչքան գնաց, մե մեծ սարի մը ռաստ էկավ։ Էդ սարի գլոխը մե մարթ կայնե գիլա։

Ռահիբ ըն Թեջիր խարցուց էդ մարթուց. —Ինչո՞ւ գիլաս։

Մարթ պատասխանեց.— Ես մեկ քուր ունի, էս քոշկի տեր դևեն իմ քուր տարավ, ես սաբախտան գելիմ կուգամ էս տեխ, մինչև իրիկուն գուլամ, չըմ կենա օր էրթա իմ քուր տեսի։

Ռահիբ ըն Թեջիր ըսաց.— Տու էդ տեխ կանի, ես կէրթամ, իշկա, թե ես դևին ախթեցի՝ տու արի, քու քուրը դևից կառիմ, քըզի կիտամ։

Էդ խոսքն ըսելուց վերջ, Ռահիբ ըն Թեջիր դիմեց քոշկն ու գնաց։ Գնաց քոշկի դռան խասավ։ Ըն տեխ մե քիչ նստավ։ Ախչիկ գլոխ փանջարից դուս թալեց ու կղանչեց.

— Տու ի՞նչ մարթ ես էդ տեխ էկեր ես, տու Մեծ դևի անուն չլսեր ես, օր էկավ քու ճոչ կտոր քու անկաջ կթորկի։

Ըսաց.— Էկեր եմ քեզ կաղատեմ։

— Դու էկեր ես ինձ կազատե՞ս, էս ա մեծ քար օր դռան դեմն ա, թե տու մեկ ծեռնով էնի ետ տվիր, դու կենաս դևին ախթես։

Տղեն ծեռ տվեց, քար մեկ տեխ գլորեց։ Ներս գնաց։ Ախչիկ խաց տվեց, տղեն կերավ։ Իրիկվան դեխ օր դևեն կիգեր, տղեն խարցրեց թե.

— Դև ինչո՞վ կախթվի։

Ըսաց.— Էնոր գորզը պատեն կախուկ ա, թե տու կենաս գորզը բանցրել, առ գնա։

Ռահիբ ըն Թեջիր, գորզ պատից առավ։ Ախչկից խարցուց.

— Դևն ո՞ր ճամփից կուգա։

Ախչիկ ճամբախ նշանց տվեց։ Տղեն էլավ գնաց։ Կես սահաթվան ճամբա օր գնաց, դևին ռաստ էկավ։ Կռվան, տղեն զարկեց դևին, կողը կոտրեց։

Դևն ըսաց.— Ընձի մի սպանե, դու իմ մեծ ախպեր, ես քու պզտիկ ախպեր։

Դևն էդ խոսքն օր ըսաց, հ՚առեճ ընգավ, տղեն ետևից, դեմի տուն գացին։

Ախչկա ախպեր տեսավ օր էդ մարթ դևին ախթեց, դեպի քոշկ վազեց։ Գնաց դևի տունը, մտավ ներս։

Ռահիբ ըն Թեջիր դևին խարցուց.— Մե քիչ հառեմ գու ընձի ասեցիր՝ «Դու իմ ճոչ ախպերն ես». օր ես քու ճոչ ախպերն եմ, ինչ ասեմ, իմ խոսքեն չելիս։ Բեր, էսա մարթու քուր տանք էդ մարթուն, թոխ տանի։

Դևն ըսաց.— Դու գինաս։

Ըսաց.— Որ ես գինամ, կիտանք տանի։

Ռահիբ ըն Թեջիր զարկեց դևին սպանեց; դևի ունեցածը ախչրկան ու ուր ախպոր տվեց։

Ախչիկը, ունեցած-չունեցած տարավ խեյրաթ խանամ բաց էնեց, ընցող դարցող ուտա, խմա Ռահիբ ըն Թեջիրին ջանին սաղութուն ուղա։

Ռահիբ ըն Թեջիր էդ դիհից իրեք օր գնաց, մե խորոտ քոշկ ու սարիմ ոաստ էկավ։ Քոշկ ու սարի դռան հառեճ նստավ, մե քիչ էն տեխ ոըհաթավ։ Ախչիկմ գլոխ փանջարից դուս թալեց, բոռաց.

— Ա՜յ մարթ, դու ի՞նչ մարթ ես, խավքն ուր թևով, օձն ուր պորտով, ճոչ դևի խոզ չանցեր էր, Միջնեկ դևի խոզ չէկեր էր։

— Ճոչ դևից ազատող աստված՝ Միջնեկ դևից էլ կազատա։

Էդ խոսքն օր ախչիկ լսեց, դուռ բացեց, տղին տուն տարավ, մի քիչ խաց բերեց։ Տղեն խաց կերավ։

Տղեն խարցուց թե.— Էդ դև ինչո՞վ կսպանվի։

Ախչիկն ըսաց.— Էդ դևին սպանել չկա, ինչքան օր զարկես, չի մեռի։ Էդ դևին օր կա, իրեք խատ ճնճուղ, մե կութու մեջ, Աֆլա-ֆիթոն սար կըսեն, վուշպու փորու մեջն է։ Ութն օր մի անգամ վուշապ ճուր կխմե, ուրբաթ օրնե ուրբաթ օր կու գա ջրու վրա։ Եթե մարթ էղի, էն տեխ ախպուր մը կա, ախպրի կուշտ ուրին լավ տեխ փորա, ինք պաղտվի ինե, վուշապ սահաթի տասվերկսին սարից կիջի, էդ ախպրի վրեն ջուր կխմա։ Լավ նշան զարկող մարթ էղի, նետ ու անեղ էնոր գլխուն զարկա, վուշապ կսպանվի, էն ճնճղուկներ վուշպու փորը ձևին, էն ճնճուղներ խանին։ Մեկ ճնճղուկ վիզը քաշին՝ դեր ուժից կընդի, թե էրկու ճնճուղներու վիզն էլ քաշա՝ դևը կմեռնի։

Էդ խոսքեր օր ախչիկ ըսաց պրծուց, տղեն խինդ ավուր խաց առավ, էլավ գնաց։

Շատ ու քիչ գնաց, Աֆլա-Ֆիթոնի սարը խասավ. ախպոր գընաց գտավ, օր հինգշաբթի. ախպրի կուշտ ուրին տեխ շիքեց։

Ուրբաթ օր կեսորին վուշապ սարից իջավ էկավ ախպրի վրեն օր ջուր խմեր։ Ռահիբ ըն Թեջիր նետվանեղ քաշեց, զարկեց վուշպու գլխուն, մեջտեխ քիսավ։ Վուշապ էնտեխ մեռավ։ Խանչլոմ

վուշպու փորը ձևեց. իրեք խատ ճնճղուկ փորից խանեց, մե Տրն-ճրղուկի վիզ էդտեխ կտրեց, շուտ շուտ դեմի դևի տուն քշեց։ Էկավ դևի խոզը ճնճղուկիմ վիզ էլ քաշեց։ Տղան մոտրցավ, դևն ըսաց.

— Ռահիբ ըն Թեշիր, էդ ճնճուղ տուր ընձի, իմ կնիկ կիտամ քըզի։

Ռահիբ ըն Թեշիր բռնեց էդ մեկ ճնճուղի վիզն էլ քաշեց։ Դև ընդավ մեռավ։

Գնաց դևի տուն մտավ։ Ախշիկն օր Ռահիբ ըն Թեշիրին տե-սավ շատ ուրախացավ։ Ախշիկ էն տղին բաղնիս ճամբեց։ Տղեն բաղնըսեն էկավ։ Ախշիկ տղին ըսաց.

— Ինձ դևից ազատիր, քըզի կառիմ։

Տղեն ըսաց.— Չէ՛, ես քըզի իմ միշնեկ ախպոր կուզիմ։ Էս սուրիաթի տերն լէ մեր ճոչ ախպոր կուզինք. էնոր ապով էս տեխ-բան կզվռնեմ։

Մե էրկ օր դևի տունը մնաց։ Ախշիկ ըսաց.

— Դու էրկու դևին սպանիր, ապա Պզտիկ դևին ինչպե՞ս պի-տի սպանես։ Եթե օր դու կենաս, էտոնց մամ Պզտիկ դևու մոտն ա, էնոր աջ ծիծը ծախ թևի վրեն թալած ա, ծախ ծիծը աջ թևի վրեն թալած ա, եթե դու էնոր աջ ծծի պտուկը քու պերան առիս ծծիս, էնի քըզի կաղատա։

Տղեն էտոր թարիֆով ճամփա կինգի, կէրթա։ Իրեք օր օր կէր-թա, քոշկի մի ռաստ կիգա։ Տուն կմտի, ախշկա ըսելով ծծեր թա-լած ա, աջ ծծի պտուկ տեսի, կխանի բերան կառի։

— Վա՜յ,— կըսա,— քու սովրցուցողի վիզը կոտրի, քե պես խոզածին էր իմ էրկու ճոչ տղեքներ ըսպանեց. թը չէ՝ մկա քըզի կզարկի շիշ, կթալի իմ ակռեքներու տակ, իմ խոքին ուրհաթեր։ Ի՞նչ էնիմ օր իմ ծիծ քու պերան առար, էլ իմ ծեռք քու վրեն չի բանց-բանա։— Տեխ նշանց տվեց ու նստրցուց։ — Իմ ճոչ տղեն,— ըսաց,— հեչ, եթե միշնեկ տղեն քե պես խոզածին ըսպանե, իմ ծծի կաթ ուրին հարամ էղի։

Էդ խոսք պրծնելուց, Պզտիկ դև տուն մտավ։ Մոր ըսաց թե.

— Էդ խոզածին ընչի՞ ես տուն թորկե։ Չկերցա՞ր զարկեր շիշ. կրակի վրեն պուներ էփեր, հ՛իգենք ուտենք։ Էդպես խոզածին ա մեր էրկու ախպրտիք սպանե։

Ըսաց.— Ի՞նչ էնիմ, իմ տղա, աստծուց էր էկավ իմ ծիծ պե-բան առավ։ Մեր էրկսի մեծը չէ, քու մեծ ախպոր էդպես խոզածին ա սպանե, իմ ծծի կաթ ուրին հարամ էղնի։

Դև ուզեց օր տղին ըսպաներ, մեր ըսաց.— Լաո, մըր տան մեջ բրուն մը խանե, լուսուն դուս կէրթա չոլ, զա՛րկ սպանա։

Հաղ բերեցին, խըտ իրար նստան խաց կերան։ Տեխմ տվեցին։ Ռահիբ ըն Թեջիր գնաց քնավ։

Սաբահտան էլան, խաց բերեցին կերան։ Էլան, ղևն Ռահիբ-ըն Թեջիրին ըսաց.

— Իմ գորզ վերցու գիր իմ թևին։

Ռահիբ ըն Թեջիր չկերցավ վերցուց, մոր կղանչեց։ Մերն էկավ պոչի դրհեն Ռահիբ ըն Թեջիր գլխու դրհեն։ Մեր վերցուց, Ռահիբ-ըն Թեջիր չկերցավ վերցուց։

Դևն ըսաց.— Քի պես մա՜րթ, ի՞նչ մարթ ես օր էն պառավ կնիկ կվերցու, դու չկենաս վերուս։

Ռահիբ ըն Թեջիր ըսաց.— Դու ամեն օր լորու միս կուտեք, ես օր մը կաորմ խաց կուտիմ, տասն օր խաց չընդի իմ ծեռ։

Դևն ըսաց.— Դե գնա՜, դու պոչի դրհեն վերու։

Ռահիբ ըն Թեջիր գնաց պոչի դեհից, դևի մերը գլխի դեհից, դև կղավ օր թևին դնին։ Ռահիբ ըն Թեջիր ծեռ թալեց գորզի պոչ, կղանչեց ուր աստված, կայիմըմ վերուց։ Վերուց, դևի մոր ծեռքից փախուց գորզը, մեկ դևին ղարկեց, դևն սպանեց, մեր փախավ, ըսաց.

— Ցամա՜ն, Ռահիբ ըն Թեջիր, ինձի մըսպանե, չէ՞ իմ ծծի կաթ կերեր իս։

Ռահիբ ըն Թեջիր ըսաց.— Գեշ ջանավար, իրեք խատ իր բերի, աշխարք ալթ ին էնի, որ խինգ խատ էլներ, աշխարք ամբողջ կա-վիրիք։ — Ղարկեց, դևի մոր լէ սպանեց։

Էդ դիից մե օրմ լէ ճամբախ գնաց, մեկ քաղքի մը ռաստ էկավ։ Էդ քաղքի մեջ ղվռնեց, տեսավ օր էն քաղքի իշխանին շատ խորոտ աղչիկմ կար։ Պատկերք ծոցեն խանեց, էդ աղչկան իշկեց. պատ-կերք ու էդ աղչիկ մեկ կնմաներ։ Ըսաց. «Ինչպե՞ս ես աղչիկ, ըս դիից տանեմ»։

Էդ քաղաքի տավար, դողեր էկան զարկին տարան։ Աղչիկ քաղքի մեջ էս կողմ, էն կողմ իշկելով, մարթմ չգտավ օր հավարի ճամբեր։ Ռահիբ ըն Թեջիրին քաղքի մեջ տեսավ.

— Ա՜յ տղա՜, ի՞նչ մարթ ես, մեր քաղքի տավար տարան, արի հավար (լուր) տար հորս, հերս գացեր ա դեզը խրզմըթի։

Տղեն ըսաց.— Ձի չունիմ, ձի մի տուր խեծիմ էրթամ։

Աղչիկ գնաց թավլեն, իշկեց, խոր աղեկ ձին թավլեն կապուկ էր։ Ձին քաշեց, Ռահիբ ըն Թեջիր էլավ ձին խեծավ, ուր աստված կղանչեց, ճամբա ընգավ։ Գնաց գողերին խաստավ։ Գողեր տասնու-խինգ մարթ ին, զարկեց գողերին ըսպանեց, տավրներ ետ դար-ցուց, բերեց քաղաք, թասլիմ էնեց։

Էդ քաղքի իշխան օր էկավ, իմացավ էդ բանը, ըսաց.

—Կանչեք էդ մարթուն, ուրին լավ բանըմ բաշխենք։

Ըսեցին էդ անծանոթ մարթուն. «Քու անուն ի՞նչ է»։

Ըսեց.— Իմ անուն Ռահիբ ըն Թեջիր է։

— Էս աղեկութուն օր դու մեզ էնեցիր, ուզի օր քզի տանք։

Ըսաց. —Իմ ուզածն էս պատկերի տերն է։ — Պատկերը իշխանին նշանց տվեց։

Իշխանը ըսաց.— Էդ պատկերք իմ ախչկա պատկերքն ա։

Ըսաց.— Էս պատկերի տերը իմ ճոչ ախպոր պիտի ուզեմ։

Իշխանը ժողովուրդին ըսաց.— Ի՞նչ կասեք, իմ ախչիկ տա՞մ էսոր ախպոր։

Էդ մարթիկ ըսեցին.— Ինչո՞ւ պիտի չտաս, էդ մարթը լավ մարթ ա, կէղի օր էդ էլ իշխանի տղա ա։

Հարցնեցին թե՝ «Դու ի՞նչ մարթու տղա ես»։

Ըսաց.— Ես թաղավորի տղա եմ։

Ամեն էլ ուզեցին ախչիկ տալ էտոր ախպորը։ Ախչիկն էլ ընդունեց։ Ամենք աչքալուս արին, ընդունեցին։ Երկու օր նշանդրեք էնեցին։ Էլավ տղեն, ախչիկն առավ ետ դարցավ։

Էկավ, Պզտիկ դևի ունեցած չունեցածն վերուց, անցավ Միջնեկ դևի ունեցած չունեցած էլ վերուց, դևի կնիկ հետ տարավ։

Օր դնաց հոր սահմանին մոտեցավ, էն օր Ռահիբ ըն Թեջիր խոր միտքն ընգավ։

Կղանչեց ուր էրկու տղին ու ըսաց.— Ձըզի մի ախպեր էսքան ժամանակ կորե, գուք ընչի՞ չէրթաք ծեր ախպոր զվոնեք, գացեք մինչև մեր խող, ո՛ր տեխրանքն է, էն տեխրանք զվոնեք, կէղի օր ձեր ախպեր դտիք։

Էլան, ընգան ճամբախ, գացին։ Մե էրկ օր իրեք օր օր գացին, մե դուրան տեղ մի, տեսան օր շաղրը կար։ Գացին շաղրրներու մոտ, խարց, փորձ էնելով զիրար ճանչըցան։

Ռահիբ ըն Թեջիր տեսավ օր ուր էրկու մեծ ախպերն ին, խանեց պատկերք ճոչ ախպոր ձեռք տվեց.

—Ահա՛. ախպեր, էսա պատկերք, էս լէ պատկերքի տեր, բերեցի քըզի։

Ախպեր իշկեց օր ճիշտ ա, պատկերքի տերն ա։

Ռահիբ ըն Թեջիր ըսաց ճոչ ախպոր.— Ախպեր, դու գնա՛, քու շաղրը։— Միջնեկ ախպոր լէ ըսաց.— Էսա լէ բերեր եմ քըզի, դու լէ գնա դևի շաղրը։

Էդ գիշեր մացին էդ տեխ։ Լուսուն էլան ըսին. «Էլեք էրթանք

ջրինդ խաղանք»։ Էլան գացին ջրինդ խաղին։ Մեկ քիչ ջրինդ խաղ-
ցան, էկան նստան ղրուցին, ապա.

— Ախպեր, ի՞մալ գացիր էս սուրեաթի տեր բերեցիր, էսա դևի կնիկ բերեցիր։

Ըսաց.— Ինչպես բերեցի՛, բերեցի։

Ըսաց.— Ինչո՞վ քըզի մարթ կարող ա ախթա։

Ըսաց.— Իմ ձիու պոչի մազ լավ ուստրկեն, իմ էրկու ծեռաց պըթին, իմ օտաց էրկու պըթին կապեն, էն ընձի կախթա։

Ձիու պոչից մազ քաշեցին, խորոտ ուստկեցին, բերին ծեռաց էրկու պրթին, օտաց էրկու պըթին կապեցին, ըսեցին.

— Քաշե՛, տեսինք կտրե՞ս։

Քաշեց, միս կտրեց օսկռին խասավ։

Ըսաց.— Ախտվա՞ր։

Ըսաց.— Ախթվա, միս կտռեց, խասավ օսկոռ։

Ծոչ ախպեր միշնեկ ախպոր ըսեց.— Բե գլոխ կտրենք։

Միշնեկ ախպեր ըսաց.— Գլոխ չկտրենք, աչկեր խանենք։

Աչկեր խանեցին, էդտեխ թորկեցին։ Էկան վերցին ուրանց ադըրներ, գացին։ Գացին խոր քաղաք խասան, խեր խարցուց, ըսաց.

— Ձեր ախպեր չտեսա՞ք։

Ըսին.— Տեսանք։

— Հ՝ուր ի օր տեսաք։

— Գացինք դևերու խետ կռիվ էնեցինք, դևեր մեր ախպեր սպանին, մենք էլ զարկինք դևերին սպանինք, առանք դևերու կնկ-տիք, էկանք։

Բերեց թագավոր իտոց հարսնիք էնեց։

Բազըրգանմ գնաց, Ռահիբ ըն Թեշիրին էն դուրան տեսավ։ Տեսավ օր քոռ մարթմ, ծեռներ, օտներ կապած, էնտեխ թալած։ Ձախուն խանեց շերից, էտոր ծեռներ օտներ արցկեց, ըսաց. «Ես էտոր պտի տանիմ, Ռահիբ ըն Թեշիր սատախեն (սիրուն) բացած խանը դնեմ, թըխ էրթա էն տեխ ապրի»։ Վերցուց ձիու պառեկին դրեց, տարավ էդ խան դրեց։

Խացի ժամանակ խաց բերեցին, կերակուլ էտոր հ՝առեճ էլ դրեցին։ Մե սաքան էլ գինի էնոր բերեցին։ Վերցուց սաքան գինին, խարցրեց թե.

— Էս վի՞ր կենաց պիտի խմենք։

Ըսեցին.— Դու չգինա՞ս վիր կենաց կխմեն։

— Չէ, ես թաղա եմ էկե։

Ըսաց.— Ռահիբ ըն Թեշիրի կենաց կխմին։

Սաքան ծեռք առավ, Ռահիբ ըն Թեշիրի կենաց խմեց։ Խաց կերավ, էկան ամներ քոմեցին։

Աման քոմողին ըսաց.— Կէրթաս էս խանի տիրուն կըսիս. «Մե նոր քոռմ է էկե, կըսա եթե խաց կիտա Ռահիբ ըն Թեշիրի կենաց, աղեկ թըղ տա, թե օր ըս տեսակ կիտա, թըխ ուրիշ անուն դնա, Ռահիբ ըն Թեշիրի անուն չդնա»։

Ամներ տարող կէրթա խանի տիրուն կըսա.

— Էսմըլա էսօր քոռմ է էկե, կըսե թը. «Օր խաց Ռահիբ ըն Թեշիրի կենաց, թըխ լավ տա, թե օր ըս տեսակ կիտա, թըխ ուրիշ անուն դնա, Ռահիբ ըն Թեշիր անուն վերցու»։

Էդ խոսքն օր կլսա, կըսա.— Կէղի՞ օր անոթի կթորկին ժողովուրթին։ — Լավ խաց կքաշա, էդ խանչին կէրթա ժողովուրթին մեջ զվռնելու, կտեսի օր թաժա քոռն օր բերած են, Ռահիբ ըն Թեշիրն է։

Օր կտեսի էդպես Ռահիբ ըն Թեշիրին, կտփա աչքերին ու դիլա. Գելի էրկու ձի կբերե, մեկ ինք կխեծի, մեկն Ռահիբ ըն Թեշիր. կտանի հեքըմներուն անջախ աչքերու բըրներ (վերքեր) կսախցու։

Ըսաց.— Ախպեր, էրթանք մըր տուն, աստծուց էր էղեր օր քու աչք խանվավ։

Էկան, ճամբի խետ ախպուրմ կեր, ախպրի վրա ծառմ կեր, ըսաց.

— Ախպեր, իշի՛, ըստեխ ախպուրմ կա։

Իշան ախպրի վրեն, փշում խաց կերան, ըսաց.

— Քո՛ւրս, ես ըստեխ մե քիչ կքնիմ։

Քուր ըսաց.— Ծառի հով քըզի քիչ քնի, էլնինք էրթանք։

Էլան ծառի հովը տեխ գլոխ գնեց քնավ։ Մե քիչ մնաց, էրկու խատ եղվրնիկ էկան, ծառի վրա իջան։

Էն մեկ եղվրնիկ խարցուց ուր մորից թե.— Էսոնք ի՞նչ մարթ են ըստեխ։

Մերն ըսաց թե.— Էդի Ռահիբ ըն Թեշիրն ա, օր էդ ախչկան դևի ծեռքից ազատեց, էտոր լավութենի փոխանորդ ախչիկ Ռահիբ ըն Թեշիրին կզվռցու։ Էտոր աչքեր խանած են, կզվռցու օր աչքերուն մե իլաջմ (դարման) էնա։

Ջադ մորից խարցուց.— Իլաջ կա՞ էտոր աչքերուն։

Մերն ըսաց.— Հա՛, օր մեր լեզուն խասկնան, ես էրկու թեբուր կթալեմ էդ ախպրի վրա, աչկեր ուր ջեբն ա, աչքեր խանա, ջրու մեջ դնա կկաղկնա։ Էդ ախպրի ջրով էնոր էրես լվա, աչքեր տեխ

դնա, էն էրկու թեբուր վերու, թաթխա ջրու մեջ, ասսու անուն տա, բսե էնոր աչքերու վրեն, ասսու հրամանքով էնոր աչքեր կբացվի։

Ախչիկն օր լսեց էդ խոսքեր, ախպոր ջեբեր իշկեց, ախպոր էրկու աչք ջեբն դտավ։ Տարավ ախպրի մեջ դնեց. մե քիչ կաղկցավ. ջուր բերեց ախպոր էրես վլաց, աչքեր տեխ դնեց, ասսու անուն տվեց ու էն թեբուրներ քսեց։ Մե քիչ մնաց, ախպեր իմցավ.

— Է,— ըսաց,— քուրս, արև գնաց կմտի, ելի էրթանք օր հասնինք տուն։

Ախչիկ խարցուց.— Ռահիբ ըն Թեջիր, բան կտեսնի՞ս։

Ըսաց.— Կտեսնիմ, էսա ծառ ա, էդ ախպուր ա։

Էլան, խեծան ձիանք, տուն էկան։ Մե էրկօր մնաց, ախչիկն ըսաց.

— Ռահիբ ըն Թեջի՛ր, եթե կմնա մինչև մեռնելուն, զիրար պահենք, եթե չէ՛, կէրթաս, ջուտով գնա։

Ռահիբ ըն Թեջիր ըսաց.— Քուրս, ես էլ էդ մտածմունքի մեջն ի, եթե օր ըսի, պիտի ըսիբ թե՝ «Ռահիբ ըն Թեջիր ինչքա՞ն բեբախտ (ապկրախտ) մարթ էր, էսքան ես հետ տանջվա չմնաց մե էրկօր, իրեք օր»։ —Ռահիբ ըն Թեջիր ըսաց ու էլավ բարևմնա էղավ ու ճանապարհ ընգավ։

Շատ ու քիչ էրթըլուց ետ, խոր քաղաք խասավ։ Մտավ քաղաք, ձին ծախեց, խորը տուն գնաց։

Խերը խարցուց թե.— Ո՞ր տեղացի ես։

Ըսաց.— Ես ուրիշ էրկրեն եմ։

— Թե օր ուրիշ էրկրեն ես, ի՞նչ գիտցար թագավորի տուն։

Ըսաց.—Ապա ո՞րտեխ էրթի։

— Ինչո՞ւ, քաղաք խան չկա՞ր։

Ըսաց.— Ես թագավորի ցեղ եմ, խան կա՞րող եմ պառկել։

Ըսաց.— Դու թագավորի ցեղ ես, էկեր ես իմ մոտ, ի՞նչ կըխնթրես։։

Ըսաց.— Քու սախություն կուզիմ։ Թագավո՛ր, քեզ քա՞նի տըղա կա։ Ըսաց.— Ես էրկու տղա ունիմ։

Ըսաց.— Էլ ուրիշ տղա չունեցե՞ր ես։

Ըսաց.— Իրեք տղա էր, մեկը մեռի։

Ըսաց.— Քու էրկու տղեն կղանչա թըխ գան ըստեղ։

Կղանչեց, էրկու տղեն ուր մոտ բերեց։

Ռահիբ ըն Թեջիր խարցուց թե.— Ծեր ախպեր ինչպես ա մեռի։

Ըսաց.— Գացինք զվռնելու, գացինք դևերու ռաստ էկանք,

դևեր զարկին մեր ախպեր սպանին, մենք զարկինք դևերին սպանինք, առանք դևերու կնկտիք, էկանք մըզի։

Ըսաց.— Թագավոր, քու տղեքներ սուտ կըսին, քու պզտիկ տղեն չի սպանվե։

Ըսաց.— Դու հաստատ դինա՞ս, օր իմ տղեն չի սպանվե։

Ըսաց.— Հա՛, ես գինամ, օր քու տղեն չի սպանվե։ Քու պզտիկ տղի անուն Ռահիբ ըն Թեջիր չէ՞։

— Հա՛, իմ պզտիկ տղի անուն Ռահիբ ըն Թեջիր է։

Ըսաց.— Ռահիբ ըն Թեջիր ես եմ։

Ըսաց.— Իմա՞լ դու ես։

Ըսաց.— Պատկերքի տեր ախչիկ ես բերեցի, դևերի կնիկ ես բերեցի, էկանք մեր խողի մեջ, իմ ախպրտիք իմ հ՚առեճ էկան ամեկու չադր ուրին նշանց տվեցի, ամեկ ուր չադրը գնաց մտավ։ էն լուսուն էլանք գացինք ջրինդ խաղցանք։ Ջրինդից պռծանք, իջանք խաց ուտելու, ընձնե խարցուցին թե՝ «Ախպեր, դու ինչո՞վ կախթվի՞ս»։ Ես ուրանց ըսեցի, թե իմ ձիու պոչի մազ ուստրկեն, իմ ծեռաց օտաց պըթեր կապեն, ինձ կախթե։ Բերեցին մազը խորոտ ուստրկեցին, իմ ծեռաց էրկու պութը, օտներու էրկու պութը կապեցին, դե ըսին. «Ախպեր, քզի իրար տուր»։ Ես ուզեցի օր քաշեի մազ կտրեի, մազ իմ ծեռք, օտ կտրեց։ Ըսեցի՝ ինձ ախթեց։ Մեծ ախպեր ըսաց. «Գլոխ կտրինք», իսկ միջնեկ ըսաց. «Աչքեր խանենք». իմ աչքեր խանեցին, թորկեցին ընձի էկան։

Թագավոր էդ խոսք օր լսեց, ուրին շատ ցավ տվեց։ էրկու տղեն սուրդուն էնեց։ Առեց պզտիկ տղեն, նստավ։

էրկնուց իջավ իրեք խնձոր, մեկ ասողին, մեկ անկաջ ընողին, մեկ էլ փայ ընողին։